Ծուշանիկ Կուրղինյան

Մեր ձայնը

Ես կերգեմ ձեզ հետ, քմածին բախտի
Ով խորթ զավակներ,
Ընկած, տրորված մահաշունչ ախտի
Անսպառ ակներ .

Որ անհայտության գրկում հուսահատ
Տանջվում եք անձայն,
Բռնակալ ուժին զոհում անընդհատ
Կյանք ու ամեն բան:

Ես կերգեմ ձեզ հետ, գրկանքից մաշված
Մշակ-բանվորներ,
Գոյության սայլին հնազանդ լծված
Թշվառ գրաստներ,

Որ բիրտ օրենքի դատից այլանդակ
Աղտոտ, գ<լխ>աբաց՝
Խավարի մեջ եք վշտով անհատակ,
Անտուն ու անհաց:

Ես կերգեմ ձեզ հետ ըմբոստ, անձնուրաց,
Անկեղծ մարտիկներ,
Որ կռիվներում միշտ առաջընթաց

Ընկաք անվեհեր:

Եվ վայելչության մեղկ հրապույրից
Մինչ մահ անկաշառ
Ընկաք կռվի մեջ թշնամու նետից
Սիրով անսպառ:

Ես կերգեմ ձեր հետ հիմնը հաղթական
Արթնացած կյանքի .
Խորտակվող հնի ողբերգը մահվան՝
Վերջը զրկանքի:

Եվ թող տարածվի մեր ձայնն աշխարհում
Միշտ անկեղծ, անպարտ՝
Միացած ուժով դիմենք անդադրում
Մեր կյանքի<ն> հպարտ . . .

1907 թ. 7 հուլիսի